


Ի պէս



Արշակ

1

3

ԱԿՆԱՐԿ

4

ՄՏՄՏՈՒՔ
Գրիգոր Պըլաեան

10

ԹՌՉՆԱՍՊԱՆԸ
Ռոբերթ Սաֆարեան

13

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՆՍԿԻՋԲ ՕՐԵՐՈՒ
Մարուշ Երամեան

21

ՅՆՈՐՈՒՄ
Գուրգէն Արզումանեան

24

ԴԱՐՁ, ՎԵՐԱԴԱՐՁ, ԱՊԱ-ԴԱՐՁ
Րաֆֆի Աճէմեան

29

ՊԱՏՄՈՒԱԾՔԻՆ ՄԱՍԻՆ
Վարդան Մատթէոսեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան
E teb ■ 2354 Pennerton Dr. ■ Glendale, ■ CA 91206
eteb@earthlink.net ■ www.eteb.com
© 2005 E teb

Նախատեսում է «Ի դէպ» գրական պարբերաթերթով ներկայացնել մի շարք ստեղծագործություններ եւ գրականութեան առնչուող նիւթեր որպէս նմոյշ, կամ գուցէ որպէս մի պատկեր, սփիւռքահայ գրականութիւնից:

Ի՞նչու հիմա եւ այս ձեւով, ի՞նչ նպատակով ու հեռանդկարով, ի՞նչ նմանութեամբ ու տարբերութեամբ հարցերին թերեւս պատասխանուի փորձի կայացումից յետոյ, սակայն մինչ այդ, ժպիտով միայն կարելի է ասել՝ «Ի դէպ»ը կը ձգտի լինել բացուող ու ծաւալուող, սկզբին վերադարձող, եւ դէպի դէպքը ընթացող թերթ:

Մոյն թիւը յատկացուած է արձակ գործերի:

Ի դէպ

Երբեմն չես նկատեր, կաս անոր մէջ, աւելի ճիշդ անիկա եկեր ու հաստատուեր է, ակամայ, ինքն իրեն, վերածուեր է կլկլոցի մը, որուն մէկէն կ'անդրադառնաս, ոչ շատ հեռու քեզմէ, կը նշմարես անմիջապէս որ կ'ընդհատուի, կամ երբ բացուող ծորակի պէս կը հոսի, ինչպէս երեխայ մը, չափազանց խանդավառ ու երջանիկ, կը տարուի, լեզուն կը բացուի, լեզուն կը բացուի, կ'ըսենք, կարծես թէ ոչ թէ կը բարբառի, այլ այն որ կը կոչենք լեզու կը բացուի իր մէջ, առանց իսկապէս գիտնալու թէ ինչ է այդ բացումը, այդ բացումը լեզուին, եւ ճիշդ ասիկա չէ՞ այն որ ամենէն խորհրդաւորն է, ամենէն առեղծուածայինը, երբ ամէն բան հնարաւոր դարձնողը, ամէն բան ընկալողը, ինք, կու գայ, կը ընծայուի, շարժի մէջ կը դնէ կարելին, քողարկուածը, կարծես թէ ինք ծնէր ինքզինք եւ նոյն ատեն աշխարհը դարձնէր կարելի, մատուցելի:

Ուրեմն կլկլոց մըն է, տարտղնուած, քիչ մը ցրուած շրջագայում մը խոհի մը, որ որեւէ դիտում չունի, դէտ ու թիրախ, չի փնտռեր տեղ ու թառ հանգչելու համար, - եւ ասիկա քունէն առաջ բարձրացող խոհերու ցաւագին երամբ չի թուիր երբ թռչունները, երազի, բանդագուշանքի եւ հսկումի միջեւ թռչկոտող իրենց թեւերը կը բանան տեսակ մը առկախումի մէջ եւ չեն գիտեր ինչպէս խմբուիլ, ո՞ր ցուէքի եզերքին, ո՞ր ծառի վրայ

ամփոփուիլ ու մնչել:

Տեսակ մը մնչիւն է, գոց բերնի ետին ու մէջ չարտասանուած ու խուլ, համրութենէն ելլել ուզող ու հոն մը նացող մղում մը, խլրտում մը, եւ կամ գուցէ անքնութեան պահին հոս-հոն թափառումը մտքին, յոգնած աքսորականի ընթացք մը որ կենալ չի կրնար.- ո՛չ, ձայն մըն է գրեթէ որ կը բախի կոկորդո ի վեր պաստառի մը, մաշկի մը, քիմքիդ, լեզուիդ տակն է, միշտ, պատիկ լեզուակի մը պէս շարժուն, ճկուն, թրթռացող, ձայն մը որ չի յօդեր, չի հեզեր, յօրանջելու պէս կ'երկարի, ներքին ականջով կը լսես, կը բացուիս անոր վրայ, կարծես թէ կը թնդայ մէջդ, կը բաբախէ, կը տրոփէ, սիրտ ըլլար գրեթէ որուն շուրջ կը դառնայ ամէն բան, կը թրթռացնէ քեզ, բայց խորքին մէջ երբ լուսութիւն մը փորձես պարտադրել դուն քեզի ոչինչ կը լսես իսկապէս, ոչինչ որ հասկնայի ըլլար, որ պատկանէր հասկնալիութեան, ունենար նշան ու նշանակութիւն, ոչինչ որ հնչէր, ըլլար հնչական, բայց նոյն ատեն ա՛ն է որ բառերը վաղը պիտի շարժման մէջ դնէ, գանոնք շարէ, առնթերադրէ, տողէ, արձակէ շարահիւսութեան մը ցանցին մէջ, թէեւ կը թուի անձեւ կաղապար մը ըլլալ, անշրջագիծ, անծիր, անգետեղելի եւ անկողմ ծաւալ մը որ ձեւաւորէ խօսքերը, ոչ թէ ձեւ է միայն, կերպ, ոչ թէ միայն շունչ այլ գուցէ յուզումի մը արձագանգը, որ մտածումի ալիք մը կը ձայնաւորէ, կը կանչէ, թերեւս անորոշ գոյացութիւն մըն է լարծուն հեղուկին նման ծննդեան, որ կը հատուի եւ ներքին ժամացոյցը կը հաշուէ, կը թուարկէ,

կը թուէ մի առ մի բոլոր մասերը անեզր նախադասութեան մը, անոր որ կարծես թէ կար արդէն նախքան յայտնուիլը, ծաւալի մը խորութեանը մէջ եւ երբեմն նախադասութիւնը կու գայ. կը կրկնուի եղածին պէս, ճիշդ այնպէս ինչպէս որ էր առաջին անգամուն, չես յիշեր առաջին անգամը, կը կրկնուի, եղանակն է որ կը կառչի մտքիդ, անդադար կը վերադառնայ, վերածուած իր ամենէն տարրական մասերուն, ընդհանուր ու դատարկ ամանակի մը մէջ, կը թուի որ չես յառաջանար, նոյն ձայնն է, ապաձայն, նոյն, միշտ նոյն պնդումը ինչպէս մանկական խաղերուն յօդագուրկ աղաղակը որ եղանակաւորում չի գիտեր թէեւ ինքնին լեզուական է, արդէն լեզուականին մէջ կը տեղափոխուի:

Սակայն գիտեմ որ ներքին ձայնը, ինչպէս կը կոչեն, կը յայտնուի, կը խօսի, կը լռէ, սկզբնական խո՞հր որ կը բանի լեզուով, կը լեզուագործէ, կը քերթէ կոկորդո, կը կտրէ, կը կանչէ, կը կոփէ բան մը որ դեռ չկայ, աներեւոյթ ձեւ մը, ոչինչ ձեւ, որ չէ դարձած այդ օձային կերպընկալումը օդին մէջ, դուրսը, եւ ուրեմն կը ձգտի դէպի դուրս, անոր կը դիմէ եւ իր դիմումին մէջ կը լռէ, ձգելով որ կշռոյթի նմանող միջոցը հաստատուի, տեսակ մը ժամանակ նախքան ժամանակը, մնացորդը ժամանակին, բայց դեռ կը լռէ ան, մեծ լուռն է որուն առջեւէն կ'անցնին, կարծես շօշափէին շունչը, կը բախին իրարու ինչպէս թռչնային լեզուին մէջ աղամական նախքան անուններուն յայտնութիւնը, բառեր կը յօրինեն, քանի որ ներքին ձայնը ամէն անգամ փորձը

կ'ընէ, կը փորձարկէ իր հաշուոյն այդ առաջին ճիգը հնչաբացութեան, ինչ որ կը մնայ բոլորովին անմբռնելի, գուցէ մտային ոչ մէկ միջոցով վերակազմելի, քանի որ ինչ որ մեզ կազմեց անգամ մը, մեզ արձակելէ ետք դէպի առաջ, ջնջած է ինքզինք, եւ այսպէս ձայն կոչածս կը յօրինէ լեզուն, կարծես թէ անկէ առաջ ըլլար կամ անկէ ետք, տեսակ մը անհամաձայնութեան մէջ, կարծես թէ լեզուն շարունակէր ինչ որ ոտքի հանեց լեզուն առաջին անգամ, ինչ որ գուցէ դարեր ընթացաւ, ուղղուեցաւ, ուժովցաւ, տոկաց ու գտաւ ճամբան դէպի լեզուն բացը, եւ հիմա որքան ալ փորձեմ ձեռքս հանգ-չեցեցնել սեղանին, անիկա կը շարունակէ իր աննուագելի ընթացքը, անդուլ, յամառ բարձրացումը մարդուն, կը ջանայ գտնել ճշգրիտ ու վճռական ելքը, տարագր, վերջին տառը որուն շնորհիւ ամբողջանար, հասնէր իր թիրախին ու դիտակէտին, գտնէր իր օրինավիճակը, իր վերջաւորութիւնը, առանց տալու ինքզինք բոլորովին, նոյնիսկ գուցէ վերապահելով ինքզինք աւելի մեծ տօնի մը, հանդիսաւորումի մը համար, որով պակասէր, եւ որուն շնորհիւ ամբողջը ապրէր, ուստի կը բնակի ինքն իր խոստումին կամ աւետումին տուչութեան մէջ, իր շնորհքին որ ճիշդ կ'ամփոփէ, կը դառնայ սկզբունք:

Որովհետեւ ինչ որ կը մտմտայ կը տեղափոխուի անվերջ նախադասութեան մը երկայնքին, տեսակ մը տարածքի մը լայնքին, որ կազմաւորուած է առաջուց, այո, այնպէս մը որ երբեք չի կրնար դառնալ արտասանելի,

չի կրնար արտաբերուիլ եթէ ոչ իր մասերուն մէջ միայն, իր տարածական կոտորակներուն, կարծես թէ աղէտ մը, սկզբնական աղէտ մը օտած ըլլար գայն ժամանակի ընդհատաւոր հանգամանքներով: Ամէն պարագայի՛ այդ նախադասութիւնը, որ ինչպէս բառը կ'ըսէ, դասուած է ինձմէ առաջ, դրուած է, բայց այնպէս մը որ նախ ինքը կայ, բայց կայ ինքը նախկինի մը հնութեամբ, բայց նոյն ատեն անիկա դէմս է, առջեւս, հորիզոն որուն կը դիմեմ, գոնէ կը թուի որ մտմտուքը զիս կը մօտեցնէ անոր, եւ երբեմն կը թուի կը մերձենամ անոր, կը դպիմ, կը շօշափեմ գայն, բայց չեմ կրնար երբեք գայն լսել, անվերապահ կերպով կրնամ լսել որ չեմ կրնար գայն լսել, ոչ թէ որովհետեւ կամեցողութիւնը չունիմ, այլ անոր համար որ երբ կը խօսիմ իսկոյն կը լսեմ գայն, արդէն կը լսեմ իբրեւ խօսք մը որ կը խօսիմ, եւ այստեղ լսելն ու խօսիլը կ'ըլլան նոյն ատեն, ոչ թէ մէկը միւսէն առաջ:

Թերեւս այդ ընդարձակ նախադասութեամբ է որ կը գրեմ, կը գրեմ ու կը ջնջեմ մտմտուքը, կը կարծեմ որ կը ջնջեմ քանի որ գրելը կը սրէ հատումները, կը բանայ, կը լայնցնէ ժամանակի բացուածքները, չի ճրգտիր գանոնք լեցնելու: Գրելը ոչ թէ կը պարագրկէ լիութիւնը նախադասութեան, այլ կ'ըսէ իմ գրկումս անկէ:

Սակայն դժուար է որ համակերպիմ ոչ այնքան լիութեան, որքան մտմտուքի կորուստին: Կ'ուզեմ որ անիկա մնայ, հսկէ ներսը, դուրսը, այնտեղ, ուր մատներս կը

հպին լսելիին ու տեսանելիին, տնօրինէ բազմաստեղն ամբողջի մը որ կը վրիպի պարագրկումէն, լարէ ամբողջը, որպէսզի ջուրի մէկ հարուած թրթռացնէ սքողուած նախադասութիւնը, ան որ, անաւարտ, անկայուն, կը մտմտայ տեղ մը:

Մըտ-մըտ, մըտ-մըտ-տուք:

Երկու կարճ, կրկնուող, կարծես վտիտ, վարանող վանկեր, անորոշ, դիմող կարծես տեսակ մը ժխտումի, տքացումի, յետոյ պայթող, եկող այդ տքացումէն իսկ, այդ ձայնային տկարութենէն, այդ կարելիութենէն կեցուցիչ, ընծայ՝ որ ձայն մըն է միայն, կոչ մը, որ կը պակսի լիութեան, շեշտ մը, որ կարծես կը քայլէ, տոտիկ, այո, տոտիկ, հետք մը կոճի, գարշապարի կոխ մը, կնիք մը, ինչ որ կու տայ կը մտանէ մտածումին, որով կը մըտածէ առանց մտածելու, ինչ որ արդէն մտած է երբ կը մտնենք մտմտութի մէջ, վիճակ մը, վայր մը, տուչութիւն մը, գուցէ ամենէն աւելի զօրութիւն մը ամբարձման:

Կը մտմտամ, այսինքն քիչ մը կ'որոճամ բան մը անորոշ, կ'ընդառաջեմ անգիտութեան:

Գրիգոր Պըլտեան

~ ԹՈՉՆԱՍՊԱՆԸ ~

Շտապ գրիչը սահեցնում է թղթի վրայ ու գրում է: Գրում է սահուն: Բառերը հեշտութեամբ հասնում են մտքին եւ նա գրչի հմուտ շարժումով դրանք թափում է դեղնաւուն թղթի տողերին: Կամաց-կամաց յուսադրուում է որ այս գիշեր ձեռնունայն չի դիմաւորելու Մաշ-դիին: Բայց միաժամանակ մտահոգուած է, շատ բան չմնաց, դռան գանգը ճիշտ պահին կը հնչի եւ եթէ մինչ այդ նա իր պատմութեամբքը աւարտած չլինի, մի ամիս էլ պիտի սպասի: Միայն վերջն է մնացել: Գլխաւոր կերպարը իր գործն արել է, սպանել է տղայի թուչուններին, նետել է աղբամանը, այժմ իրեն պատրաստում է ինչ ասել երեխաներին: Լաւ, հիմա ի՞նչ անել, հէնց այդպէս պատմութեամբքը վերջացնե՞լ, այսպէս ասած՝ «բաց» վերջաւորութիւն, թէ՞ նկարագրել նաեւ մարդու հանդիպումն իր ընտանիքի հետ: Այդ դէպքում, մարդը ի՞նչ պիտի ասի երեխաներին, ինչպէ՞ս պիտի բացատրի թուչունների անյայտացումը: Գրողը հայացքը դարձնում է դէպի ժամացոյցը: Միայն եօթը ըրպէ է մնացել ժամկէտին եւ այդպիսի կարճ միջոցում անհնարին է ստեղծել մի նոր դրուագ իր բոլոր մանրամասնութիւններով: Բացի այդ, զգում է գրածը լաւ է ստացուել: Երկար ժամանակից ի վեր սա առաջին անգամն է, որ իր տասնեակ մտայացումներից մէկը յաջողել է յանձնել թղթին, դրա համար էլ լաւ է զգում: Ուրեմն, որոշում է ընտրել հէնց այսպիսի «բաց» վերջաւորութիւն: Իրօք, նոյնիսկ եթէ ժամանակի պակասի հար-

ցը նկատի չառենք, այսպէս աւելի լաւ է: Մտածում է՝ պատմուածքի գլխաւոր կերպարը մի կերպ իր արարքը կը բացատրի եւ կարիքը չկայ նոր հանգոյց ստեղծելու, որովհետեւ դա արդէն նոր պատմուածք պիտի դառնայ: Իսկ եթէ չի ուզում մի նոր դէպք աւելացնել, ապա գլխաւոր կերպարի դէմ առ դէմութեան տեսանքը ընտանիքի հետ ամբողջովին աւելորդ կը լինի: Մի խօսքով, պատմուածքը վերջացած է: Հէնց այս մտքերի մէջ է, երբ դուան գանգը հնչում է: Աթոռին նստած տեղից վեր է ցատկում երկու ոտքերի վրայ: Համարակալուած թղթերը դասաւորում է: Արդէն երկար տարիներ է, ինչ սովորութիւն է դարձրել գրելու ժամանակ էջերը համարակալել, որ յանկարծ յետ ու առաջ չլինեն: Թղթերը խնամքով ծալում է, վազելով աստիճանները երկու-երկու իջնում է եւ բացում է դուռը: Մաշդին, քաղաքի աղբահաւաքների նարնջագոյն համազգեստով դիմացը կանգնել է:

- Բարեւ Մաշդի:

- Բարեւ պարոն գրող, արդէն ձեր դէմքից կարող եմ գուշակել, որ այսօր բան ունէք ինձ համար:

Գրողը ետեւում թաքցրած թղթերը հանում է, եւ դրանք մեկնելով Մաշդիին, դէմքի ամբողջ լայնքով ժպտում է.

- Ճիշդ ես կուահել:

Յետոյ ձեռքի թղթերը դանդաղ ճմոխսում է եւ նետում է Մաշդիի սայլակի վրայ դրուած երկու մեծ աղբամաններից մէկի մէջ, որն արդէն լիքն է ճմոխսուած թղթերով:

- Շնորհակալ եմ: Յաջողութիւն եմ մաղթում,- ասում է Մաշդին ու առաջ է քշում սայլակը: Գրողը մի քանի վայրկեան նայում է նրան հեռանալիս ու վերադառնում է տուն: Խորը բաւարարուածութիւն է գգում: Արդէն քանի ամիս էր, ինչ չէր կարողացել նոյնիսկ մի պատմուածք աւարտին հասցնել: Դեռ պատմուածքի վերջաւորութեան կապակցութեամբ մի քիչ տարակուսում էր: Բայց ինչ որ է, վերջացաւ, գնաց: Եւ յանկարծ յիշեց՝ պատմուածքի խորագիրը մոռացել է: Շտապ վագում է դէպի դուռը, դուռը բացում է, մէկ աջ է նայում, մէկ՝ ձախ: Զախ կողմում, փողոցի վերջում, Մաշդին անյայտանում է պտոյտում: Գրողը հէնց այդպէս չուստերով ու փիժամայով վագում է դէպի փողոցի վերջը, պտտում է աջ եւ կանչում է Մաշդիին: Մաշդին, որ պատրաստում է սեղմել մի ուրիշ տան դուան գանգը, կանգ է առնում:

- Ի՞նչ է պատահել, պարոն գրող:

- Ոչինչ, ոչ մի կարեւոր բան: Միայն մի փոքր վրիպում. պիտի մի բան աւելացնեմ գրածիս:

Ու սկսում է փնտրել աղբամանը: Բարեբախտաբար իր օգտագործած դեղնաւուն թղթերը տարբերում են միւս թղթերից ու նա արագ գտնում է դրանք: Թղթերը բացում է, գտնում է առաջին էջը եւ դրա ճակատին գրում է պատմուածքի վերնագիրը. «Թռչնասպանը»: Յետոյ նորից թղթերը գցում է աղբամանի մէջ եւ հանգիստ մտքով վերադառնում է տուն:

Ռորերթ Սաֆարեան

~ ֕ՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՍԿԻԶԲ ՕՐԵՒՈՒ ~

Եւ ուրեմն կրկին անկողնիս մէջ եմ, թէեւ քնացած չեմ: Անկողնիւն եղեր է քնանալու կամ սիրաբանելու համար: Բայց ես անկողնիս մէջ եմ մտածելու համար: Անշուշտ գոց աչքերս կը խանգարեն: Անշուշտ բարձը իր հոտով (քունի հոտ, որ արդեօ՞ք քիչ մըն ալ մահուան հոտին կը նմանի, եթէ մահը հոտ ունի ...) կը խանգարէ: Այո, անկողնիս մէջ կը խանգարուիմ, չեմ կրնար մտածել: Բայց ուրիշ տեղ չունիմ:

Օր մը խոհանոցը կը մտածէի: Ճաշի ընթացքին Միհրանը այնքան խօսեցաւ՝ աղի է, չ'ուտուիր, հում մնացեր է, շատ եփեր է... (միշտ ըսելիք մը ունի, այդ օրը ճիշտ ո՞ր մէկը ըսաւ, չեմ յիշեր)․ այնքան խօսեցաւ որ երկու օր չկրցայ մտածել․ խանգարեց․ իր բառերը գլուխիս մէջ էին, գնացքիս հակառակ սուրացող ինքնաշարժներու պէս: Սարսափելի էր: Ա՛լ խոհանոցը չմտածեցի, վախնալով որ արկած մը կրնայ պատահիլ: Եւ խոհանոցը դադրեցաւ, ու դարձաւ կերակուրներու հոտով լեցուն անիմաստ քարայր մը․ կարծես ուրիշ տեղ չունինք ողջ մնալու:

Անշուշտ կայ արդուկի սեղանը, խոստովանութեան խցիկի պէս: Կ'արդուկես, կ'արդուկե՛ս, ձեռքը կը շարժի աջ-ձախ, աջ-ձախ, կ'երթայ-կ'ուզայ, եւ ուղեղդ, ձերբագատուած ամէն կապանքէ, կը սաւառնի՛: Բայց ո՞վ է հոն գիս լսողը, որ արժանի ըլլայ բառերս դատելու: Խոս-

տովանա՛նք... Բայց ծէսերու հաւատացող մարդ չեմ:

Յիշեցի որ վարսայարդարին պէտք էր երթայի, ժամադրուած եմ: Կ'ատեմ սպասելը այդ խճողուած սալոններուն մէջ, ուր բզզացող բամբասանքը կը տարտղնէ մտքերս, ուղեղս կարծես կը պարպուի, եւ ձայները կը սկսին արձագանգել:

Հիմա արդէն քնացեր եմ:

Անշուշտ չեմ: Պարզապէս դուռ ու պատուհան գոցեր եւ օր ցերեկով վառեր եմ անկիւնի լամբերը, որոնք լուսաւորելէ աւելի խորհրդաւորութեամբ կը լեցնեն: Մտեր եմ անկողին եւ կը մտածեմ:

Վերջին տեղը անկողինէն առաջ բաղնիքն էր, երբ գաւակներս...

Դուան ձայնն էր կարծես, չէ՞: Եկան: Պէտք է ելլել...



Արձակուրդ է: Այսինքն չեմ կրնար անկողին մտնել, «քնացած» ըլլալ եւ մտածել: Ստիպուած բաղնիք մտայ:

Այդ կ'ըսէի՝ խոհանոցէն առաջ բաղնիքն էր․ կը նըստէի, կարծես սրճարան ըլլայի, տեղ մը, ուր կրնաս խճողումի մէջ նստիլ աղմուկով շրջապատուած, բայց ըլլալ առանձին, անկողնին պէս: Բաղնիքն այլ: Այնքան խորշելի, որ ամէն մարդ ընելիքը կ'ընէ եւ շատ արագ դուրս կ'ելլէ: Ինձմէ գատ: Ինչո՞ւ աճապարել: Դուրս ելլելը երբ որ ըլլայ, կայ, պիտի ըլլայ: Ուրեմն նստիլ լուրժեան եւ մտերմութեան մէջ, առանց ընդմիջուելու, առանց խանգարուելու, եւ մտածել:

Օր մը նոյն այս մտերմութեան մէջ էի, գաւակներս յանկարծ խաղի կիսուն բացակայութիւնս գգացին, տագնապով տան անկիւնները նայեցան, եւ լացակու- մած բաղնիք խուժեցին:

Ու գտան զիս: Ճիշդ այդպէս՝ գրքի մը մէջ խորա- սուզուած: Չէին գիտեր ի՞նչ ընել՝ ուրախանա՞լ, որ գըտ- նուեր եմ, թէ՞ չհասկնալ:

Հիմա ազդանշան կու տամ.

- Բաղնիք մտնող կա՞յ. ես պիտի մտնեմ:

Ազդանշան, որ հասկնալի է բոլորին, Սիւրանէն գատ.

- Նորէ՞ն բաղնիքն ես:

Եւ կը ստիպուիմ ելլել:

- Բաղնիքն ես. եկայ:

Ընդմիջեցի: Օրը աւարտէն սկսաւ:

~

Անկիւն մը չկայ, որ կռնակդ պաշտպանուած ըզ- գաս, գոնէ բոլոր մտածումներդ հոն ամբարես ու յետոյ, երբ ժամանակը գայ, դասաւորես:

Բայց ի՞նչ է ժամանակը, որ կար, այնքան առատ կար, երբ նախակրթարան կ'երթայի. նոյնիսկ երկրորդ- դականի օրերուս, երբ օրը այնքան յստակ բաժանում ունէր՝ դպրոց, եւ դպրոցէն վերջ, այս երկուքը այնքան լայն էին, ճիշդ երկու օրուայ չափ տարողունակ ու տար- բեր: Կաշկանդուած եւ ազատ: Վերջին գանգին հետ ներ- շնչումը այնքան խորունկ կ'ըլլար, որ օրուան երկրորդ

կէսին համար ծրագիրներ կ'արտաշնչէի:

Այն ատեն ժամանակը դարձող էջեր չունէր, վերջա- ցող տետրակի տագնապ չկար. չկար նոյնիսկ մտահո- գութիւնը գրելու՝ չէ՞ որ տետրակը եղեր է գրելու հա- մար: Կար հաճոյքը երագին, ընթերցումով կ'ըլլար:

Եւ հիմա չկայ. կայ կեանքը, որ կը պարտադրէ ապրիլ, եւ ոչ ընթերցել:

Թերեւս ալ կայ, բայց այնքան մանրուած, կոտո- րակուած, որ չ'երեւիր, ինչպէս փոշին տան մէջ, կամ քաղաքին վրայ երկինքէն թափող հողը, որուն հոտը այնքան ճնշիչ է, որ կարելի չէ անտեսել, թէ՛ եւ չ'երեւիր:

Այդպէս ալ ժամանակը, որ չկայ չկայ չկայ, խիտ, շատ խիտ ըլլալով.

- Արագ ըրէ՛, ձեռնարկին պիտի ուշանանք:

- Շուտ, քնացէ՛ք, առտուն կանուխ պիտի արթննաք,

թէ ոչ դպրոցէն կ'ուշանաք:

- Նորէ՞ն ճաշը ուշացեր է:

Որքան ալ փորձեմ խոհանոց-ննջարան երթողիին վրայ նոր, երրորդ ուղի մը բանալ, որ գոնէ եռանկիւն մը ըլլայ... չըլլար: Երթողարձը կը դառնայ մեքենա- կան, շունչ կտրող, եւ մ'նացեալ բոլորը՝ մտածում, երագ, ցանկութիւն եւ ընկ. սնանկութեան տարուած կը հեռանան հրապարակէն:

~

Միակը, զոր կարելի ըլլայ բռնել, շօշափել, գամել նայուածքին՝ ներկան:

Ես ալ սակայն, մեր բոլորին նման, արեան նմանութեամբ, մէկ վայր ունիմ ապրելու՝ անցեալը: Ապագան անհասկնալի, վտանգաւոր տարածք մըն է, որուն կը զգուշանանք մօտենալու, բայց մեր ներկան հեծած, մենք մեզ կը խաբենք զէպի հոն երթալու եռանդով:

Ներկան ես կը փորեմ շունչովս, ոտքերովս, որպէսզի ալ ընտրանք ունենամ՝ անցեալ, ապագայ, անժամանակ...

Տակաւին չըսի, թէ ինչո՞ւ անպայման կ'ուզեմ մտածել, կը ճգնիմ, կը բզկտուիմ: Ինչպէ՞ս ըսեմ: Ե՞րբ ըսեմ: Հիմա մաքրութեան կիներ հոս է: Բաղնիքը գրեթէ միշտ մարդ կայ: Իսկ անկողինը ...



Յետոյ կեցայ հայելիին առջեւ. շատ լաւ կը ճանչնայի, բայց զինք այսպէս չէի ուզեր՝ գէր, սեւազգեատ (ո՛չ, սուգ չէ, նիհար երեւելու խաբկանք), մագերը ուսերէն վար թմրած Մետուզա, նայուածքը բացակայ.

- Կարեւորը այն է, որ իրենք կա՛ն, շատ կան եւ լաւ կան:

Անոնք՝ այո՛, շատ եւ լաւ կան: Բայց ի՞նք:

- Մա՛մ, ինչո՞ւ այսքան զիրք կայ անկողնիդ քով:

- Քանի մը հատը միաժամանակ կը կարդամ:

- Ինչո՞ւ, ինչպէ՞ս:

- Զրուցելու պէս, քանի մը հոգիի հետ խօսելու

պէս:

Զրոյց եւ լռութիւն: Զրոյց լռութեան մէջ: Լռութեամբ: Մինչեւ որ լռու դառնայ խազ, դառնայ մեղեդիին մէկ մասը: Հիմնական մասը: Մունիթ Պէշիր: Փարիզի Օլիմփիայի ծափողջիւններուն կամ արաբական բակի մը իրիկնային խաղաղութեան մէջ: Եւ ճամբան՝ Օլիմփիայէն մինչեւ արաբական բակի խաղաղութիւնը, կ'անցնի իմ երկրէս, կ'անցնի զիրքերուս վրայէն, կ'անցնի մէջէս:

Ես, որ ճամբայ կը հարթեմ, ես անշարժ կը մնամ «այստեղ», «հիմա»:



Կը կարդամ.

“... the relation of thought to the written sign.”

Կը մտածեմ՝ ճիշդ յարաբերութեան պէս կնոջ եւ իր այրին:

Մտածումին քանի՞ տոկոսն է, որ զիրի կը վերածուի ...

Օրերուս մէջ ցրուած զիրքեր կան, գրութիւններ կան, անուններ. ի՞նչ ընել զանոնք. ի՞նչ ընել անոնցմով: Կ'երեւի դասակարգել ըստ գնումի թուականի, վայրի: Մեծ մասը ունին, իրենց կոնակներուն գրուած, ինչպէս Երուսաղէմի խաչը դաջուած երէցներուն բազուկներուն, արդէն լայնցած, փոթփոթած, ձեւագեղծուած: Յետոյ եղաւ շրջան մը, որ ամէն մարդ կ'ուզէր ուշադրութենէ հեռու պահել զայն:

Եւ այս բոլորը՝ սովորամոլութենէ հեռու մնալու համար, աւագախորումէ խուսափելու համար:

Բայց ի՞նչ են «այս բոլորը»:

Որովհետեւ նախ կայ Պատմութիւնը, եւ կայ Անհատական Պատմութիւնը: Եւ եսը, որ կը թափառի անոնց միջեւ ելք մը փնտռելով: Ելքեր:

Մերինները պիտի չուզեն, որ գտնեմ ուղին Պատմութենէն Անհատականը գացող: Այդ չուզելուն մէջ էր անցաբառը, որ յուշեց ելքը, այդ երթուղիին վրայ: Եւ ճիշդ այդտեղ է, որ «այս բոլորը» տեղի կ'ունենան:

~

Այն ինչ որ մէջս է, երբեմն համբերութեամբ կը սպասէ դուրս գալու, երբեմն, աւելի յաճախ, յայտնատեսութեան խիտ ու կրկնուող պահերու կը տեսնէ ներքին բակը, ուր բանտարկուեր-մնացեր է, յոյս չնչելով եւ սպասում ուտելով: Այդ խիտ ու կրկնուող պահերուն է, որ եսը՝ նախկինը, անխաթարը կ'արթննայ իր սրբագանութեան՝ խենթութեան ու կը պահանջէ ապրիլ:

Ապրելու համար, որ գրել կը նշանակէ կամ նկարել, երգել, դերասանել, ի վերջոյ ըլլալ աւելին քան «կինը», ապրելու համար պէտք է մոռնալ թէ ի՞նչ է կինը, ո՞վ է կինը, եւ սկսիլ սկիզբէն, ամենէն ծայրէն, երբ դեռ ոչինչ կար:

Այդ ոչինչէն սկսիլ եւ ապրիլ խենթութիւնը սրբագան:

~

Կին, մայր:

Եղածները բոլորն ալ բան մը չեն եղած: Չեղածներն են որ եղեր են:

Եւ արուեստագիտուհի, հոմանուհի:

Միշտ բան մը վճարել պէտք է:

Կը բաւէ ու կ'աւելնայ այն պայմանով, որ ըլլայ... ցաւը՝ ամենակարող, լուսաւորիչ, ներշնչարան:

Թէ ոչ՝ կը վագես ննջարան-խոհանոց, խոհանոց-նրնջարան երթուղիին վրայ, կը հասցնես ու չես հասնիր:

~

Բոլոր սահմանափակումներուն դէմ կը մնայ մէկը, միակը՝ մտածումը: Մասնագիտանալ այնտեղ:

Ինչո՞ւ:

Կը մտածեմ: Ուրեմն կա՞մ:

Ո՛չ:

Կը մտածեմ, ուրեմն կը փորեմ զետիներ, կը քանդեմ երկինքը, կը հերկեմ ծովը: Որովհետեւ անոր վերջաւորութեան է որ կը սկսի սկիզբը:

Մարուշ Երամեան

Երբ խռովութեամբ աչքերը բացեց չհաւատաց իր դէմ ցցուած տեսարանին. տանիքի գերանները կիսով ալրուած թափուել էին սենեակի մէջ, դիմացի պատը ամբողջովին փլուել էր, մարախլապատ երկնքի մի կըտոր գրաւել էր սենեակը եւ աստիճանաբար ճեղքերից ու բացուածքներից շարունակուում էր խուժել դէպի ցածի յարկերը: Ջրի սեւ կաթիլները ալրուած սիւններից ու կիսաւեր պատերից դեռ կըթ-կըթ կաթում էին յատակին ցրուած էջերի վրայ, որոնց ընթերցումը նախորդ գիշեր այդքան հաճոյք էր պատճառել իրեն:

Ձեռքը երկարեց ծխախոտի տուփին, վերցրեց, յետոյ հրասթափութեամբ դատարկ տուփը ճմուռքեց ջղազրու-գրուած մատների արանքում եւ մի կողմ շարտեց: Խար-խափելով գետինը մահճակալի տակ գտաւ օղիի կիսա-դատարկ շիշը, երկու կում խմեց, արիւնը սկսեց հոսել երակների մէջ, լաւ զգաց, աւելի կենտրոնացած գննեց շուրջ բոլորը, երա՞գ է, ի՞նչ է:

Պաղ քամին փչեց անպաշտպան սենեակի մէջ, ցուր-տը խանգարեց իրեն, վերմակը քաշեց գլխին, աչքերը փակեց եւ փորձեց մտքի մէջ յստակացնել իր դէմ ցցուած տեսարանը իրականութի՞ւն է, տեսի՞լք է, թէ՞ բանա-ստեղծական մի պատկեր: Սաստիկ ծարաւ զգաց, բղա-ւեց, ու՞ր ես ով մարդ, մի բաժակ ջուր... տո՛ւր: Ձայն էլ իր պէս ծոյլ չուզեց տեղից շարժուել եւ մնաց վերմակի

տակ փակուած:

Փորձեց կենտրոնանալ աւելի լուրջ բաների վրայ, սակայն ծխելու խիստ ցանկութիւնը արգիլեց, վերմակը մի կողմ նետեց, վճռական շարժումով անկողնուց դուրս եկաւ եւ կանգնեց խարխուլ շէնքի ծայրին: Հեռուում լեռ-ների ձիւնածածկ գագաթները քողարկուել էին թանձր ամպերի տակ: Մի պահ անյոյս հորիզոնը գննելուց յետոյ ցատկեց վար եւ որոշեց այս անգամ քայլել մինչեւ թաղի նպարատունը:

Ճամբին նկատեց հարեւանները խուժը-խուժը հա-ւաքուած ցածր ձայներով խօսում էին իրար հետ: Իրեն չտեսան, ձայնը չլսեցին, կարծես չկար, չէր եղել: Քիչ հեռանալուց յետոյ շուռ եկաւ եւ նայեց դէպի բնակա-րանը: Տունը թափանցիկ էր դարձել, մուտքի կողմի պա-տերը չկային եւ տան ներքին ու միշտ գաղտնի պահուած մասերը պարզ ու յստակ սակայն տխուր կերպով ցուցա-դրութեան էին դրուել: Այս թափանցիկութիւնը վերա-գրեց իրերից այն կողմ տեսնելու իր յատուկ կարող-ություն, իր գերագոյն տեսողութեան:

Շարունակեց ճամբան: Մոխրոտ մի քամի ձիւնի մանր փաթիլները փաթթեց իր շուրջ եւ ձուլուած ու միացած ձիւնախառն քամուն սահեց առաջ: Տերեւա-թափ ծառերի ճիւղերից մէկին կենտ տերեւի պէս նստած էր թմբիլի մի ճնճղուկ, վիզը ներս քաշած պատսպար-ւել էր թեւերի տակ, մտածեց երանի թէ ճնճղուկ լինէր:

Երբ մտաւ նպարատուն, սիրեց լուսաւոր ու տաք խանութը, յատկապէս իր բարեկամ հնդիկ վաճառորդի

ջերմ վերաբերումը, որ տխուր մի ժպիտ դէմքին, ասաց, շա՛տ ափսոս:

Ի՞նչը:

Չես լսե՞լ, եւ մինչ գանձանակի ստեղներին սեղմեց 4.25 ծխախոտի գինը, սեղանին դրուած Իւթա Նիւզը ձեռքով հրեց դէպի նա: Անփութօրէն սկսեց կարդալ առաջին էջի վրայ խոչոր տառերով որպէս խորագիր տըլլած իրեն շատ ծանօթ հայքուն՝

միշտ գինով
եւ ինձնից առաջ քնող
իմ պահապան հրեշտակ

Ուշադրութիւնը խիստ սրուեց եւ շարունակեց կարդալ ենթախորագիրը՝ «Յունուար 9-ի առաւօտեան պահերին մարդը հրդեհի գոհ դարձաւ իր տան մէջ»:

Ոտքերը թուլացան, անդրադարձաւ ինչ որ բանաստեղծական պատկեր ու ամենատեսութիւն էր համարել, իրականութիւն էր: Փլուեց գետնին, խոչոր բայց տեղտեղ ճերմակ փետուրները խանձուած թեւերով ծածկեց գլուխը եւ այդպէս մնաց անշարժ:

Գուրգէն Արզումանեան

* Լրագրում բանաստեղծ Լեոնարդօ Ալիշանի մահուան լուրը կար-դալուց յետոյ:

~ ԴԱՐՁ, ՎԵՐԱԴԱՐՁ, ԱՊԱ-ԴԱՐՁ ~

Շարաթ առտու, Համրա, Սատաթ փողոց, եօթերորդ յարկ: Չորեքշաբթի երեկոյեան հասայ եւ տակաւին գինով վիճակի մէջ եմ ցերեկ-գիշեր դրոյթիս խանգարումին հետեւանքով: Բայց ոչ միայն: Վստահ չեմ ճիշդ ինչպէս նկարագրել այս զգացումը. ահաւաստիկ փորձ մը. «նորէն եկանք»: Այո՛, սակայն ո՞ւր:

~

Մոնթրէալէն թռիչքը բաւական սահուն էր, «դիպազոլը» պիտի ըսէի եթէ համարձակէի ուղղակի թարգմանել անգլերէնէն: Հազիւ պատառ մը ուտել ու աչքերը գոցել, կրկին լոյսերը կը բանան ու նախաճաշ կը բերեն: Օրը ցերեկ եղած է արդէն: Շաուլ տը Կոլ վազվզուք մը, մինչեւ հասնիմ Միտլ Իսթի կրպակը, որով երկու թռիչքներուն միջեւ ձգուած ժամանակը հազիւ թէ բաւարար էր: Կը հասնիմ որ արդէն կրպակը գոցած են: Կը բացատրեմ որ հիմա հասայ Մոնթրէալէն եւ թրանզիթ եմ: Աղջիկը հեռաձայն մը կ'ընէ եւ կը հարցնէ՝ նոր հասնող կայ՞ ընդունի՞մ: Այո՛, այո՛, կը պաղատիմ մըտքովս: Պատասխանը ըստ երեւոյթին դրական է: Աղջիկը տոմսս կ'առնէ ու կը սկսի մուտքի գործողութեան: Հինգ վայրկեան վերջ տոմսը ձեռքս կը վազեմ դէպի օդանաւ ու կը մտնեմ: Առաջին տպաւորութիւնս՝ կապոյտներու ծովի մը մէջ եմ: Պէտք է տեսնել օդանա-

ժիշտներուն նոր զգեստները՝ ութրօ թիւրքուազ մը՝
չնաչխարհիկ: Տակաւին մէկդի կը ձգեմ ժպիտներն
ու նրբութիւնները:

~

Կը տեղաւորուիմ աթոռիս մէջ: Օղանաւը ըստ
երեւոյթին լեցուն չէ: Ետեւս երկու լաչակաւոր
կիներ: Իմ շարքս միայն ես եմ: Նոյի նոր էրպիւս
մը, որուն աթոռներն ալ օղանաժիշտներու զգեստ-
ներուն երանգով են, կապոյտներու ներդաշնակ
համանուազ մը իբրեւ նախադուռ դէպի կապոյտ
ջուրերը Միջերկրականին: Քիչ ետք գլխաւոր
օղաչուն բարի գալուստ պիտի մաղթէ նախ արա-
բերէն՝ «սայլիտաթի սատաթի...»: Որքա՛ն ատեն է
այս արտայայտութիւնը չեմ լսած: Ապա անգլերէն:
Ֆրանսերէն թարգմանութիւնը կը կատարէ նա-
ժիշտներէն մէկը:

~

Վերջապէս կը բարձրանանք ու շատ չանցած կը
սկսի ուտելիքի սպասարկութիւնը, բաւական ճոխ
ու համեղ: Չորս ու կէս ժամնոց թուիչք մըն է ու ա-
րագ կ'ընթանայ: Արդէն կը սկսինք վայրէջքը: Քիչ
ետք քանի մը հագար մեթրի իջած ենք ու պատու-
հանէն ծովուն ալիքները կը դիտեմ: Ապա իջողդին
է, ծովուն մէջ խրած: Քաղաքը գրեթէ չենք տեսներ:
Իջողդին վրայ սակայն կ'երեւին Շուֆի լեռները:

Օղակայան, մաքսատուն, մուտք եւ արդէն դուրսն եմ:
Մէկ ճամպրուկս ետ մնացած է ու ձեւակերպութիւն-
ներէն ետք կը թելադրեն երեկոյեան գալ ու առնել գայն,
ինչ որ կ'ընենք աւելի ուշ առանց հարցի:

~

Բարեկամս գիտ օղակայանի հին ճամբէն կը տանի,
նախկին շոճիներով շրջապատուած երթողիէն: Շոճի-
ներէն հագիւլ նմոյշներ մնացած են: Ճամբաները խը-
ճողուած չեն ու շատ չանցած կը հասնինք քաղաքակեղ-
րոն, Մօնօ փողոցով կ'իջնենք ու կը թեքուինք դէպի
Համրա: Յստակ է որ եռուզեռը թեթեւ է: Հարիրիի սպա-
նութենէն ի վեր մարդիկ նուազ դուրս կ'ելլեն ու ճաշ-
րաններու յաճախորդութիւնը թեթեւ է:

~

Օղակայանի ճամբէն իսկ, նոյնիսկ ատկէ առաջ,
օղանաւին մէջ՝ լաչակներէն սկսեալ ու զանոնք կրող
կիներէն,- անոնցմէ մէկը մերկ ոտքը երկարած էր
աթոռիս ու պատուհանին միջեւ գտնուող արանքին,
հանգչելու համար,- «նորէն եկանք»: Բայց՝ զգացումը
կը բազմապատկուի երբ ինքնաշարժը կը շարենք ու կը
բարձրանանք բնակարան: Պատուհանէն աչքերուս
առջեւ կը փուռի յիշողութեանս մէջ կրկնազրուած տե-
սարանը շէնքերու տանիքներուն: Շէնքերու համայնա-
պատկեր մը, մէկ կողմէն մարմարապատ ու հսկայական
պատշգամներով բարձրաշարկեր, միւս կողմէն կիսա-

ւերակ ու քոսոտ շէնքեր ու կիսաշէնքեր, բոլորը կատարեալ դրացնութեամբ կողք-կողքի բազմած իրենց աչք ծակող երեւոյթով՝ մանրանկարը ժողովուրդի խաւերուն: Անոր առջեւ է որ երկփեղկում մը կ'ապրիմ, կը զգամ որ կարծես ժամանակին մէջ ճամբորդութիւն մը ըրի ու հասայ տեղ մը, որ քսան տարի առաջ ձգած եմ: Բայց ինչպէ՞ս կարելի է ետ երթալ, երբ Համրայի այս թաղերը տեսած իսկ չեմ քսան տարի առաջ:



Երբեք չեմ հաւատացած վերադարձներու եւ միշտ կ'ըսեմ որ կեանքը միայն առաջ կ'երթայ, ուզենք կամ չուզենք, բայց ահաւասիկ կը գտնուիմ հակասութեան մը առջեւ: Զգայարանքներս կը թելադրեն դարձի ու վերադարձի եղանակներ: Շրջապատէն եկող ալիքները յիշողութեանս մէջ թաղուածներուն հետ կը միախառնուին ու շփոթի կը մատնեն զգացումներս, մինչ առջեւի իրականութիւնս կրնայ միայն անծանօթ մը ըլլալ, գուցէ ծանօթ անծանօթ մը: Ամենայնդէպս՝ յայտնաբերելի:



Անքուն եմ ու գիտովի պէս: Կ'երթանք պատառ մը կ'ուտենք Արթիւրին ճաշարանը: Քիչ ետք էլի Սիւլէյ-մանը կուգայ, պաղեստինցի բեմադրիչը: Ըստ երեւոյթին Պէյրութ կ'ապրի: Ճաշարանը արուեստագէտներու հանդիպատեղի մըն է: Ապա կը վերադառնամ ու կը փուռիմ անկողնին վրայ, անհամբեր սպասելով առա-

ւօտեան առաջին պտոյտիս փողոցներն ի վար: Մտքիս մէջ կը ջնջեմ դարձ ու վերադարձ եզրերը ու կը զետեղեմ նոր մը՝ ապա-դարձ, ետքը եկող դարձ մը, որ կը յուսամ կը շրջանցէ վերադարձի անկարելի, «նորէն եկանքային» երանգները ու արահետը կը բանայ դէպի նոր իրակա-նութիւն մը՝ յայտնաբերելի: Կը քաջեմ երազային քուն մը: Առաւօտեան էգէնի մեղեդիներ կուգան խառնը-ւելու քունիս թելերուն, շոյելով ու մարձելով անոր երկարաձգուող արձագանգը: Վաղը նոր օր մըն է: Ապա-դարձ մը՝ գուցէ:

Բաֆֆի Աճէմեան

- ՊԱՏՄՈՒԱԾՔԻՆ ՍԱՄԻՆ -

Փոքր արձակը, ըլլայ պատմուածք, նորավէպ թէ՛ այլ նմանատիպ տեսակ, միշտ կը խոստափի դասաւորումէ: Դասագրքային կամ գրապատմական սահմանումները կը փայլին իրենց անկատարութեամբ: Արդիական պատմուածքի հիմնադիրը ու առաջին տեսաբանը էտկար Ալան Պոն ըլլալով, վերջին աւելի մէկ ու կէս դարուն ընթացքին պատմուածքը անցած է տարբեր հանգրուաններէ ու տարբեր փորձառութիւններէ, ճիւղաւորուած է բազմաթիւ ենթարաժիւններու, ենթարկուած է ոճական զանազան փորձարկումներու: Ռուս (Տուրգենև, Չեխով, Տոլստոյ), ֆրանսացի (Մերիմէ, Ֆլոպէռ, Տօտէ, Մօփասան), ամերիկացի (Պիրս, Օ Հենրի, Գրէյն, Ճէք Լոնտոն, Շերվուտ Անտերսըն) եւ այլ ազգերու պատկանող արձակագիրներ պատմուածքի հիմքերը նետած են, ճամբայ բանալով Ի. դարու արդիապաշտ փորձերուն, ուր ձէյմզ ձոյսի «Տուպլինցիներ»ը ուղենշային եղած է, քանի մը տարիով կանխելով «Ողիսեւս»ի դերը վէպի պարագային:

Սահմանումի դժուարութիւնը կը ստիպէ տարբեր սեռերը դասաւորելու փոխյարաբերութեան կարգով: Այսպէս, պատմուածքը նորավէպէն կարճ կ'ըլլայ, իսկ վերջինս՝ վէպէն կարճ: Ծաւալի որդեգրումը որպէս

չափանիշ արդէն այդ դժուարութեան զրսեւորում մըն է: Ի տարբերութիւն վէպին, որու դիպաշարը բազմակողմանի երեսակներ կ'ունենայ, պատմուածքը կը յատկանշուի կեդրոնական դէպքի (event) մը առկայութեամբ եւ իր կարճութիւնը համեմատական է ընթերցողին կարելիութեան՝ այդ դէպքը ընկալելու եւ ընթերցողական արարքի ենթարկելու: Դէպքը կրնայ բազմաթիւ ձեւեր ունենալ (տեսարան, դրուագ, արարք, կերպարներու ցուցադրութիւն, օրուան պատահար, հանդիպում, խօսակցութիւն, ցնորք...), բայց անոր առանձնակիութիւնը էական պահանջ մըն է՝

Սփիւռքեան պատմուածքի հիմքը արեւմտահայ կարճ արձակն է, որ իր կարգին ֆրանսական պատմուածքը ունեցած է որպէս բնորդ: (Բնականաբար, իրանահայ գրականութեան արմատները արեւելահայ պատմուածքին կ'երթան): Արեւմտահայ պատմուածքի առաջին յաջող նմոյշները կու գան իրապաշտներու շրջանէն (Արփիար Արփիարեան, Գրիգոր Զօհրապ, Լեւոն Բաշալեան, Երուխան, եւ այլն) եւ այդ չափանիշը անցած է սփիւռքահայ պատմուածքին: Արեւելահայոց պարագային, Շիրվանզադէն ու Նար-Դոսը՝ վէպին մէջ նուիրագործուած անուններ, իրապաշտ պատմուածքի նմոյշներ տուած են, թէեւ, ինչպէս Օշական դիտել տուած է, ռուսական գրականութիւնը ընդհանրապէս դեր չէ ունեցած²:

Խնդրական է, անշուշտ, թէ ե՞րբ տեղի ունեցած է այդ անցումը: Ի՞նչ պէտք է նկատի ունենանք «սփիւռքահայ պատմուածք»ի անունին տակ: Նման բնորոշում մը կը կարօտի «Սփիւռք» երեւոյթի սահմանումին նախ եւ առաջ, որպէսզի «սփիւռքահայ»ը կարենանք ճշդորոշել: Եթէ պիտի առաջնորդուինք աշխարհագրութեամբ ու ժամանակագրութեամբ, ապա 1920 էն ետք տեղի ունեցած ցրւումը պէտք է նկատի առնուի: Սակայն, նոյն ժամանակաշրջանին ստեղծագործած ամերիկահայ Համաստեղն («Գիւղը», 1924 եւ «Անձրեւը», 1929) ու Ֆրանսահայ Շահան Շահնուրը («Յարայէզներու դաւաճանութիւնը», 1933) հաւասարապէս սփիւռքահայ ըլլալու իրողութիւնը կը կիսե՞ն: Ինչպէ՞ս պէտք է վերաբերիլ պոլսահայ գրագէտներէ յաճախակի լրւած առարկութեան, թէ Պոլիսը Սփիւռք չէ(ր): Այսինքն, եթէ հարցում մը դրուի, թէ ե՞րբ գրուած է սփիւռքահայ առաջին պատմուածքը, պատասխանը կախում ունի, թէ ե՞րբ սկսած է Սփիւռքը: Բայց Սփիւռքը, որ հոգեվիճակ մըն է աշխարհագրականէն անդին, ամէն տեղ նոյն թուականին չէ սկսած: Հետեւաբար, «սփիւռքահայ առաջին պատմուածք»ին պատասխանը կամայական տարեթիւ մը պիտի ենթադրէ:

Մնալով սփիւռքահայ երեւոյթի գուտ աշխարհագրական սահմանումին վրայ, յիշատակութեան արժանի են շուրջ քսանեակ մը անուններ, բայց թերեւս

կարելի է համարձակիլ կազմելու սեղմ ցանկ մը, տարբեր պատճառներով ու առանց վերջնական ըլլալու որեւէ յաւանութեան.- Համաստեղ, Շահան Շահնուր, Վահէ Օշական, Յակոբ Կարապետ: Ինչպէս ամէն ցանկ, այս մէկն ալ կը մնայ որպէս գայն կազմողին անձնական ճաշակին արդիւնքը:

Վարդան Մատթէոսեան

1. Քաղած ենք որոշ տուեալներ հետեւեալ հրատարակութենէն.- Frank N. Magill (ed.), Critical Survey of Short Fiction, vol. I, Englewood Cliffs, 1981:
2. Յակոբ Օշական, Ջուգակչիո արեւելահայ եւ արեւմտահայ գրա- կանութեանց, Պէյրութ, 1999, էջ 33-34: